ղեսցի յիս, այլ առաւել եւս հաստատեցի 'ի հաւատս փառաւորելով զԱստուած »։

Ոչ սնոտի պատճառանօք և ոչ տղայական մտօք ելաք յայտի. մեծախորհուրդ խոհեմութեամբ մտաբերեա եւ մի մեղանչեր մեղադրելով ինձ. 'ի մէջ երկայրի սրոյ եթող զիս որ եթողն, եւ յետ ոչ բազմաց ինչ աւուրց տարաժամ մահուամբ երեւէր ինձ ելանել յաշխարհէ, յորմէ վնաս մեծ ազգին և Աթոռոյն։ Լաւ չլինէր 'ի գնալոյ իմ 'ի Կոստանդինուպօլիս. զի քանի մի անձանց կամ տունն բնակութեան եւ կամ հոգւոյն։ Ինձ արարի և ոչ այլոց՝ զոր արարի։ Եւ ապա գանկատ զՆղիա եպիսկոպոսէ։ Զեպիսկոպոսական Թագն և զՎակասն եթող յԱթոռն 'ի յիշատակ հոգւոյ Զմիւռնացի հանգուցելոյ Էքիզեան Յարութիւն Աղայի։

Դարձեալ խնդիր գրամոց ('ի 23 Ապրիլի), և 'ի սմին մեղադրէ զԿիրակոս եպիսկոպոս, իբրեւ Խորհրդական դըրագիր, որ յառաջագոյն ինքն էր, «Արժան էր և ձեզ զայլ իմն վկայել ընդ Ս. Գահակալին և Տ. Նղիայի, որ գրողն էիր գրոյն. այլ է բարեկամութիւն, ազգականութիւն, ընկերութիւն և եղբայրութիւն, և այլ է ըստ իրաւանց վկայութիւն կամ դատողութիւն. Թէպէտ և դու բարկացեալ ես և խռովեալ յինէն, բայց դարձեալ հաշտեսցիս և ուրախ լիցիս ընդ արարս իմ, զոր ոչ վայրապար արարի. եղեւ, որ եղեւն»։ Միթէ իրաւո՞ւնք են միոյ հօր որդւոց ոմանց յղփանալ հարիւրաւորօք և ոմանց անինչ ելանել, մեք եթէ չիցեմք տէր 10,000 դահեկանի, միւսոյն ուստի՞ են այնքան քսակք. եթէ կարելի է աղաչեմք յօր յառաջ զձայնս մեր կտրել վճարելով զտասն հազարն ցՅուլիս վերջ, յետ այնորիկ եւ ձայնք մեր հանտանին յականջաց ձերոց (յ3 Յուլիսի)։

Թէպէտ արարք մեր խոչ երեւին ազգին, մանաւանդ ծանօթից և սրտակից եղբարց եւ կարեւոր բարեկամաց, այլ նոքին ըստ իւրեանց կամաց միայն դատեն, Յունացն դեգերելով. զհաւատս Երրորդութեան, զեկեղեցի, զկրօն, զկարգ չեմ ուրացեալ և ոչ 'ի Ֆրանկութիւն փոխարկեալ, բայց եթէ զգլխահարկի թուղթն 'ի [illegible] փոխարկեալ, և զսեւազգեստութիւնն 'ի պայծառս, եւ զպաշտօն